

ՄԵԹՈԴԻԿԱ

Մերի ԵՄԱՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՄԱՆ ԴԵՐԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՎՐԱ

Տվյալ հոդվածի ուսումնասիրության առարկան է «Միջմշակութային հաղորդակցման դերը և նրա ազդեցությունը օտար լեզվի դասավանդման վրա»: Միջմշակութային հաղորդակցումն ու օտար լեզվի դասավանդումը տարբեր, սակայն միևնույն ժամանակ միմյանց հետ սերտորեն կապված գիտական ճյուղեր են:

Յուրաքանչյուր լեզվի ուսուցման դասընթաց, այսպես կոչված, «մշակութային խաչմերուկ» է հանդիսանում: Կարելի է պնդել, որ դա նաև միջմշակութային կապի փորձի փոխանակում է, քանի որ օտար բառերն արտացոլում են ոչ միայն օտար երկիրը այլև նրա մշակույթը: Պետք է ասել, որ ցանկացած լեզու արտացոլանքն է այն հասարակության, որը խոսում է տվյալ լեզվով: Ցանկացած խնդիր, որը կապված է օտար լեզվի դասավանդման հետ խիստ կապված է այդ իսկ երկրի ժողովրդի սոցիալական և մշակութային առանձնահատկությունների հետաքննության հետ: Ամբողջ աշխարհի գիտնականներն ու մասնագետները վերանայում են արդեն գոյություն ունեցող մեթոդներն ու մոտեցումները և առաջարկում են նորանոր լուծումներ: Այս բոլոր պայմանները նախադրյալ են հանդիսանում միջմշակութային կազմակերպությունների հետ լավ հարաբերությունների հիման համար, որոնք նպաստում են էկոնոմիկայի, քաղաքականության և այլ ասպարեզների առաջխաղացմանը:

Լեզուն ուսումնասիրվում է դասագրքերի, քերականության, գրականության, երաժշտության, ֆիլմերի միջոցով: Սակայն դա բավական չէ լեզվի բոլոր հմտությունները տիրապետելու համար, քանի դեռ չես ապրել տվյալ հասարակությունում և չես զգացել այդ հասարակության ոգին, շունչը:

Այստեղ կարելի է ակնարկել նորագույն նվաճումների մասին, որոնցից են միջազգային փոխանակման ծրագրերը: Գոյություն ունեն տարրատեսակ ծրագրեր - ուսանողական, դպրոցական, մաս-

նագետների փոխանակման ծրագրեր: Նմանատիպ ծրագրերն ընձեռում են ավելի լավ կրթության հնարավորություն, այլ մշակութային մտածելակերպի ձեռքբերում: Սա է պատճառը վերոհիշյալ միջազգային ծրագրերին մեծ կարևորություն հատկացնելու փաստը:

Կարելի է համարել, որ այսօր օտար լեզվի դասավանդման ընդհանուր նպատակը լեզուն որպես կապի միջոց ուսուցանելն է: Դատախոսի հիմնական խնդիրը հաղորդակցման ունակությունների զարգացման, ամենաբարձր մակարդակի հասցնելն է: Այս խնդիրների լուծման ճանապարհները գտնելու համար պետք է մշակել դասավանդման նոր մեթոդներ, որոնք կզարգացնեն լեզվի բոլոր չորս հմտություններն, ինչպես նաև մշակել նոր նյութեր, որոնք հնարավորություն կտան դարձնել հաղորդակցման պրոցեսն ավելի դյուրին: Սակայն նշանակում է արդյոք դա, որ պետք է մոռանալ հին մեթոդները:

Չնայած այս մեթոդները և մոտեցումներն առաջացել են ժամանակագրական կարգով, նրանք անընդհատ մրցակցության մեջ են և շատ հաճախ գոյակցում են միաժամանակ: Առաջին տեղում զբաղեցնում են ավանդական մեթոդները, բայց ոչ մոտեցումները: Երկրորդ տեղում սկիզբ են առնում մի շարք մոտեցումներ, որոնք հիմնված են հստակ և լավ սահմանված տեսական սկզբունքների վրա: Եվ վերջապես, երրորդ խմբում են, այսպես կոչված, նորարարական մոտեցումները և մեթոդները, որոնք հիմնականում նախատեսված են լեզուն որպես հաղորդակցման միջոց դասավանդելու համար:

Տրադիցիոն մեթոդներից է հանդիսանում Քերականական Թարգմանական Մեթոդը (GTM):

18րդ դարում օտար լեզուների ուսուցումը հանգեցվում էր միայն քերականական կանոնների ուսուցանման և դրանց հիման վրա նախադասությունների, տեքստերի թարգմանելուն: Բանավոր խոսքն ու գործունեությունն հասցվում էր մինիմումի, դրա փոխարեն սովորողից պահանջվում էր անգիր սովորել քերականական կանոններ և կիրառել դրանք ուսումնասիրվող լեզվով գրված տեքստերը վերծանելու համար:

Հայտնի է, որ GTM դեռևս ամենից շատ կիրառվող և նախընտրելի մոդելն է, որը համեմատաբար ավելի կայուն և անփոփոխ է մնացել կրթական ոլորտում: Սակայն ժամանակին համընթաց, հաշ-

վի առնելով սոցիալ քաղաքական, աշխարհագրական զարգացումները, հաղորդակցման նոր պահանջները, փոխվում են լեզուն ուսումնասիրողի պահանջները:

Գլխունականներն հետզհետե կորցնում էին իրենց վստահությունը միայն մեկ եզակի մեթոդի օգտագործման արդյունավետության հանդեպ, հետևաբար առաջ եկավ հաղորդակցական մեթոդի գաղափարը: Այս մեթոդը մի շարք հմտությունների և ստրատեգիաների համադրություն է: Այն հայտնի է «ետ-մեթոդական» դարաշրջան անվանումով: Որպեսզի ավելի լավ հասկանանք այս ժամանակաշրջանի լեզվի դասավանդման մեթոդների էությունը պետք է հենվենք Լեզվի Հաղորդակցական Մեթոդների դրույթների վրա (Communicative Language Teaching):

Սա ծագել է վաղ 70-ականներին Եվրոպական Փորձագետների Խորհրդի աշխատանքի արդյունքում: 1960-ականներին Չոմսկին կարող է համարվել «ունակություն» և «իրականացում» գաղափարների ներմուծող, իբրև արդեն տարածում ունեցող աուդիո-լինգվալ մեթոդին հակառակ ռեակցիա:

Այս երկու գաղափարներն հետագայում զարգացում ստացան Հայմսի աշխատություններում և ստացան «հաղորդակցման ունակություն» անվանումը, որը տարանջատում է հոգեբանական, մշակութային և սոցիալական նորմերի տարրերը՝ կանոնակարգելով բանավոր խոսքի օգտագործումը:

Եվրոպայում փորձեր էին արվել օգտագործելու քննադատական լեզվաբանության զարգացումները ուսումնասիրելու համար լեզվի դասավանդման տարբեր մեթոդները: Կարևորություն էր տրվում խոսքի գործընթացի տեսությանն, ինչպես նաև դիսկուրսի վերլուծությանը:

Հաղորդակցման Լեզվի Ուսուցումն /CLT/ ընկալվում է որպես մոտեցում, այլ ոչ թե մեթոդ : Որպես այդպիսին, CLT արտացոլում է որոշակի մոդել, հետազոտական պարադիգմ կամ տեսություն: Նրա հիմքում ընկած է մի տեսության, ըստ որի լեզվի հիմնական գործառույթը հաղորդակցական ֆունկցիան է:

Դրա նպատակն է օգտվել կյանքի ռեալ իրավիճակներից, որն էլ անհրաժեշտ է հաղորդակցման համար: Ուստի սա միասնական, բայց ընդհանուր առմամբ տեսության վրա հիմնված լեզվի բնույթի, նրա ուսուցման մասին տեսակետ է (H.Douglas Brown):

Լսարանում CLT հաճախ ստանձնում է գույզային և խմբային աշխատանքի իրագործման դերը՝ պահանջելով սովորողների միջև հաստատել լիաժեք համագործակցություն, խոսքի սահունության վրա հիմնված գործողություններ, որոնք խրախուսում են սովորողներին զարգացնել իրենց վստահությունը, բեմադրել դերային խաղեր՝ նպաստելով ուսանողների լեզվական, ինչպես նաև քերականության ճիշտ օգտագործման և արտասանության գործառնություններին:

CLT կարող է լավագույնս կիրառվել այնպիսի լսարաններում, որտեղ ուսանողները բազմազգ են, ինչպես որ Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանն է: Դասախոսի համար ամենադժվար և առաջնային խնդիրն է հասնել ուսանողների միջև լավ հարաբերությունների և արդյունավետ կապի ստեղծման:

Ցանկացած հասարակություն ինտեգրվելու համար պահանջվում է ոչ միայն առօրյա կյանքում նոր լեզվի կիրառման հմտություն, այլև մշակութային արժեքների, այլ համակարգերի խոր հետազոտություն:

Արժեքային համակարգը ներառում է մշակույթը, ոչ միայն բանավոր, այլ նաև ոչ բանավոր կապի միջոցները, ժեստերը, հումորը և ամեն մանրուք, որ մարդիկ օգտագործում են հաղորդակցման գործընթացում: Հաշվի առնելով Ռուս-հայկական համալսարանի ներքին կառուցվածքը, կարելի է եզրակացնել, որ հաղորդակցման գործընթացը շատ ավելի դժվար մակարդակով է իրականացվում, քանի որ մայրենի լեզու կարելի է համարել և ռուսերենը, և հայերենը:

Հիմնական խնդիրներից մեկն այն է, որ ուսանողներն իրենց գիտելիքները նախ և առաջ ստանում են ռուսերեն լեզվով, վերամշակում են հայերեն և փոխակերպում կրկին ռուսերենի: Մեկ լեզվից մյուսին, իսկ երբեմն էլ երրորդ լեզվին անցնելու դեպքերը կարող են առաջ քաշել հոգեկան դժվար իրավիճակ: Այնուամենայնիվ, դա ժամանակի խնդիր է: Այդ գործընթացը մեղմելու որոշ եղանակներ կան, այդ թվում նաև տարբեր միջոցառումների կազմակերպում, համատեղ դասընթացներ եւ քննարկումներ:

Այս ամենը վերաբերում են ռուսերենից հայերենի և հայերենից ռուսերենի անցնելու մշակութային և լեզվական փոխակերպումներին: Մեկ այլ արդիական խնդիր է անգլերենը որպես միջազգային հաղորդակցման միջոց հանդիսացող կապի աճման անհրաժեշտ

տությունը ամբողջ աշխարհում: Վերջին տարիներին, անգլերենը դարձել է քաղաքականության, տնտեսության, տեխնոլոգիաների, գրեթե աշխարհային եւ այլ ոլորտների ոչ պաշտոնական միջազգային լեզուն:

Անգլերենի դերը հայ ժողովրդի համար մեծապես աճեց հիմնականում սովետական միության փլուզումից և անկախության հռչակումից անմիջապես հետո: Ավելի սերտ կապեր հաստատվեցին օտար երկրների, ինչպես նաև սփյուռքի հետ: Անգլերենը շատ արագ մուտք գործեց նույնիսկ մեր առօրյա կյանք:

Հետևաբար գոյություն ունի օտար լեզուների ուսուցիչների հսկայական պահանջարկ: Բազմազան ոլորտների մասնագետները լինի ֆիզիկա, մաթեմատիկա, քեմ մշակույթ, պետք է տիրապետի առնվազն մեկ օտար լեզվի: Նրանք պարտադրված չեն սովորելու սովյալ լեզվի տեսությունը կամ պատմությունը: Օտար լեզվի ուսուցման միակ նպատակը դա լեզուն որպես հաղորդակցման միջոց կիրառելու ունակությունն է: Այս խնդիրը հաղթահարելու համար պետք են ուժեղ էական տեսական հիմքեր: Տարիներ առաջ օտար լեզվի դասավանդման ավանդական մեթոդ համարվում էր տեքստերի ընթերցման մոտեցումը:

Բանասիրության ֆակուլտետների ուսանողները կարդում էին գրական տեքստեր, իսկ այլ ֆակուլտետների ուսանողները կարդում էին հատուկ մասնագիտական տեքստեր կամ քննարկում էին այնպիսի ակտուալ թեմաներ, ինչպիսիք են «Թատրոնում», «Հիվանդանոցում» և այլն:

Նման թեմաների քննարկումն ու անգիր սերտելը, առանց ծանոթանալու ուսումնասիրվող լեզվի երկրի հետ, պարզապես ժամանակի կորուստ էր: Կարելի է եզրակացնել, որ լեզվի միայն մեկ գործառնությամբ՝ տեղեկատվական գործառնությամբ էր իրականացվում, հետևաբար միայն կարդալու հմտությունն էր զարգանում: Միակ պատճառը դա մեկուսացումն էր: Այլ ազգերի հետ շփման, ինչպես նաև այլ մշակույթների ուսումնասիրության հնարավորություն չկար:

Օտար լեզուների ուսուցումն իրականացվում էր գրավոր տեքստերի հիման վրա, որոնք խոչընդոտում էին լեզվի հաղորդակցման ունակությունների զարգացմանը, առանց որի անհնար էր շփման իրականացումը: Յուրաքանչյուր օտար լեզվի ուսուցչի նպատակն է հասնելու հաղորդակցման ունակությունների զարգացման ամենա-

բարձր մակարդակի: Հաղորդակցման ունակությունների զարգացման համար պետք է զարգացնել լեզվի բոլոր չորս հմտությունները:

Հայտնի է, որ հաղորդակցման գործընթացը իր մեջ ներառում է ոչ միայն բանավոր պրոցես: Նրա արդյունավետությունը կախված է նաև մի շարք այլ գործոններից, ինչպիսիք են էթիկայի կանոնների, ոչ բանավոր կապի միջոցների (միմիկա, ժեստեր), ավանդույթների եւ սովորույթների ուսումնասիրությունը:

Լեզվական գիտելիքը բավարար չէ տարբեր մշակույթների ներկայացուցիչների միջև արդյունավետ կապի հաստատման համար: Մարկովան և Սորոկինան իրականացրել են հետաքննություն, որը վկայում է հետևյալ պնդումը. «Տարբեր մշակույթների ներկայացուցիչների հաղորդակցման գործընթացում լեզուն միակ խոչընդոտը չէ երկկողմանի փոխըմբռնման հասնելու համար: Ազգային մշակութային առանձնահատկությունները կարող են խոչընդոտել միջմշակութային կապի գործընթացը: Կան, այսպես կոչված, մշակութային բաղադրիչները, որոնք ունեն ազգային երանգավորում: Ահա դրանցից մի քանիսը՝ ա) ավանդույթներն ու սովորույթները, բ) «առօրյա կուլտուրա», որը խիստ կապված է ավանդույթների հետ, ուստի այն կարելի է նաև անվանել «առօրյա ավանդական կուլտուրա» գ) վարք, ընդհանուր սովորություններ, ինչպես նաև հատուկ միմիկա և կինետիկ կողերը, որոնք լայնորեն օգտագործվում են նրանց կողմից, ովքեր օգտագործում են հատուկ լեզվական մշակույթը, դ) «արտաքին աշխարհի ազգային ընկալում», որն արտացոլում է ազգային մտածողությունն իր առանձնահատկություններով հանդերձ:

Յուրաքանչյուր անձ եզակի անհատականություն է, որն ունի որոշակի առանձնահատկություններ: Միջմշակութային հաղորդակցման ընթացքում պետք է հաշվի առնվեն տվյալ անձի ազգային առանձնահատկությունները, հուզական վիճակը եւ մտածելակերպը»:

Հաղթահարելու համար վերոհիշյալ առանձնահատկությունները պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել սոցիալ - մշակութային բաղադրիչների զարգացման նշանակությանը: Ըստ Ե.Սեպիրի յուրաքանչյուր մշակութային համակարգ և յուրաքանչյուր հասարակության գործունեություն ենթադրում է հաղորդակցման գործառույթ:

Հետևաբար անհրաժեշտություն կա խորապես և մանրակրկիտ ուսումնասիրել լեզվակիրների աշխարհը, (ոչ թե լեզուն, այլև աշ-

խարհը), նրանց մշակույթը, մտածելակերպը, կենսակերպը, ազգային առանձնահատկությունները, քանի որ խոսքի մեջ գործածվող բառերը, ինչպես նաև խոսքն ինքը սահմանվում են հասարակության սոցիալական և մշակութային կյանքի գիտելիքներով:

«Լեզուն չի կարող գոյություն ունենալ առանց մշակույթի», – Ե.Մեայիր:

Քերականության և բառիմաստի իմացությունը բավարար չէ լեզուն որպես հաղորդակցման միջոց օգտագործելու համար:

Այլ կերպ ասած, բացի քերականության և բառիմաստի իմացության գիտելիքներից պետք է նաև իմանալ, 1) երբ, ինչպես, ով, որտեղ է պետք խոսել կամ գրել, 2) ինչ իմաստ ունի իրականության որևէ հայեցակարգ.

Այսպիսով, պետք է քննարկել խոսքի՝ սոցիոլեզվաբանության, լեզվաբանության, ինչպես նաև ուսումնասիրվող լեզվի աշխարհի հետ հարաբերությունների համադրումը:

Սոցիոլեզվաբանությունը, լեզվաբանության մի ճյուղ է, որն ուսումնասիրում է լեզվական միավորների և իրականության խնդիրների փոխկապակցված լինելը: Մի կողմից պետք է նկատի ունենալ հաղորդակցման գործընթացի այնպիսի փաստեր ինչպիսիք են ժամանակը, վայրը, նպատակը, մյուս կողմից էլ կարևոր նշանակություն ունեն ավանդույթներն ու սովորույթները, սոցիալական և մշակութային առանձնահատկությունները:

Տարածքային լեզվաբանությունը սոցիոլեզվաբանության դիդակտիկ անալոգիան է, որի նպատակն է համախմբել օտար լեզվի ուսուցման մեթոդները և տվյալ լեզվով խոսող հասարակության սոցիալ - մշակութային առանձնահատկությունների ուսումնասիրությունները:

Տարածքային լեզվաբանության որոշ տարրեր պետք է կիրառվեն լեզվի դասավանդման գործընթացում: Հետևաբար այն կարելի է անվանել տարածքային լեզվաբանական ուսումնասիրություններ:

Ուսումնասիրվող լեզվի ամբողջական աշխարհը գիտության յուրահատուկ բաժին է, որը մեծապես կապված է օտար լեզվի ուսուցման հետ: Այն հիմնականում ուսումնասիրում է ոչ լեզվական փաստերի, այսպես կոչված սոցիալ-մշակութային կառույցների և միավորների այն համադրությունը, որոնք ընկած են լեզվաբանության հիմքում:

Անհնար է ուսումնասիրել լեզուն որպես հաղորդակցման միջոց, առանց լեզվի ամբողջական աշխարհի բոլոր առանձնահատկությունների հետազոտության: Հատուկ ուշադրության է արժանի իրականության ճիշտ ընկալումը, քանի որ այն օգնում է հասկանալ և գնահատել փաստերը և երևույթներն իրենց իրական իմաստով: Խոսքի ուրաքանչյուր ակտի հիմքում ընկած է, այսպես կոչված, – «ընդհանուր կողոր», իրականության ընդհանուր գիտելիքները և խոսողի կամ ունկնդրի /կամ ընթերցողի/ քննարկման հիմնական առարկան:

Այսպիսով, կարելի է պնդել, որ ցանկացած լեզու տվյալ լեզվով հաղորդակցվող հասարակության արտացոլանքն է: Ցանկացած խնդիր, որը կապված է օտար լեզվի դասավանդման հետ սերտորեն կապված է տվյալ երկրի ու ժողովրդի սոցիալական եւ մշակութային առանձնահատկությունների հետազոտության հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Brown H.D. Principles of Language Learning and Teaching. Cambridge: Cambridge University Press, 2006.
2. Murcia M.C. Teaching English as a Second or Foreign Language. Cambridge: Cambridge University Press, 2000.
3. Тер-Минасова С.Г. Язык и межкультурная коммуникация. Москва, 2000.
4. Сепир Э. Коммуникация. Избранные труды по языкознанию и культурологии. М.: Прогресс, 1993.
5. http://en.wikipedia.org/wiki/Communicative_language_teaching

М. ЕСАЯН – “Роль межкультурного общения и его влияние на преподавание иностранных языков”. – Предметом данного исследования является “Роль межкультурного общения и его влияние на преподавание иностранных языков”. Однако, межкультурное общение и преподавание иностранных языков разные, но в то же время они тесно связаны друг с другом. Урок обучения каждого языка является так называемым “перекрестком культур”.

Можно утверждать, что это обмен межкультурной коммуникацией, так как иностранные слова отражают не только страну, но и его культуру.

Можно сказать, что любой язык является отражением общества, которое говорит на данном языке. Любая проблема, которая связана с преподаванием иностранного языка, тесно связана с исследованием социальных и культурных особенностей народа данной страны.

M. YESAYAN – *The Role of Intercultural Communication and its Impact on Foreign Language Teaching.* – The subject matter of the present article is the role of intercultural communication and its impact on foreign language teaching. Intercultural Communication and Foreign Language Teaching are two different disciplines, but at the same time they are closely bound to each other. Every lecture on language teaching or learning is the so-called "crossroad of cultures". One can state that it is also a practice of intercultural communication, as far as foreign words reflect a foreign world and culture. Nowadays Foreign Language Teaching undergoes various conversions. Scientists and specialists all over the world revise already existing approaches and methods, aims and objectives of foreign language teaching.